ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻԼԳԱՄԷՇԻ ԴԻՒՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ

ՍԻՈՆԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1. — [Իմ սիրար պիտի չտրամէր] (և) իմ գի[մագիծը չգտարէր]
2. — [վիշտը պիտի չըլլայ] իմ [սր]տին [մէջ].
3. — իմ [դէմքը] պիտի չնմանի [մէկու մը, որ երկար ուշադրութիւն է կատարած].
4. — իմ դէմքը [պիտի չտաղուի ատաքէ և ցուրտէ].
5. — [ու պիտի] չթափանցի արձակապաշտի վրայ.
6. — [իմ բարեկամը, կրտսեր եղբայրը(?). որ որոց յովապը արձակապաշտի] (և) ցիրը տափատանի.
7. — [Էնկիդուն՝ իմ բարեկամը. իմ կրտսեր եղբայրը(*)]. որ որոց յովապը արձակապաշտի (և) ցիրը տափատանի.
8. — [Մենք որ նուաճեցինք ամէն (խոչընդոտները) և բարձրացանք] լեռները,
9. — [որ բռնեցինք և] սպաննեցինք երկն[քի ցուլը].
10. — [տապալեցինք Գումբաբան, որ] կը բնակէր մայրիներու անտառին մէջ.
11. — [բարեկամս որ սպան]նեց [ինձի հետ] առիւծներ,
12. — [բարեկամս, որ գնաց ինձի հետ] բոլոր գրկանքներու [ընդմէջէն].
13. — Էնկիդուն՝ իմ բարեկամը, որ] սպաննեց [ինձի հետ] առիւծներ,
14. — [անոր վրայ հասած է մարդկութեան ճակատագիրը վեց օր և եօթը գիշեր] արտասուեցի անոր վրայ.
15. — [չյանձնեցի գինքը] թաղուելու,
16. — [մինչև որ որդը ինկաւ] իր [դէմքին] վրայ.
17. — [սոսկացի ... և] վախ[ցայ] մահ[էն], [ահա թէ ինչո՞ւ կը թափանցի արձակապաշտի վրայ.
18. — [բարեկամիս հարցը] ծանր [կը կշռէ] վրաս, այս պատճառով կը թափանցի արձակապաշտի [վրայ].
19. — [Էնկիդուն հարցը], բարեկամիս, ծանր կը կշռէ վրաս, ահա թէ ինչո՞ւ հեռուները [կը թափանցի արձակապաշտի վրայ].
20. — [ի՞նչպէս] գինամ լռել, ի՞նչպէս կրնամ հանդարտիլ,
21. — [բարեկամս, գ]որ կը սիրէի, հոգի վերածուած է. Էնկիդուն՝ [իմ] բարեկամը, [գոր կը սիրէի, հոգի վերածուած է].
22. — ես ալ իրեն պէս պիտի չքնանա՞մ (և) չարթնանամ ցմրչուս։
23. — Գիլգամէշ (տապանին) քսաւ անոր՝ Ուանապիշ[տիմ]ին.
24. — «[Հի]մա գամ և տեսնեմ Ուանապիշտիմը գոր կը կոչեն ահեռաւորը.
25. — [Դաց]ի թափանցելով բոլոր երկիրներու շորջ.
26. — կարեցի շատ մը դժուարին լեռներ,
27. — կարեցի բոլոր ծովերը.
28. — քաղցր նիզիզով չյագեցաւ իմ դէմքս.
29. — մաշեցայ անքնութեան հետանքով, (և) լիցուցի յօդերս ցաւով.
30. — չհասած գինեսան աղախնոյն [աու]նը, գոգնաւս մաշեցաւ.
31. — [սպան]նեցի արջ, բրնձի, առիւծ, յովազ, վագր, եղջերու, քաղ, վայրի որոց և կենդանիները արձակապաշտի
32. — անոնց [մարը] կերայ (և) անոնց մարմինը հա[գայ].
33. — [. .] թող անոնք գոցեն անոր գուռը ձիւթով և կա[պրով ...].
34. — (Զափագանց հատուածական՝ թարգմանութեան համար).
35. — [Ուանապիշտիմ] քսաւ անոր՝ [Գիլգամէշին].
36 – 50 — (Զափագանց հատուածական՝ թարգմանութեան համար).

ՍԻՈՆԱԿ ՎԵՑԵՐՈՐԴ

(սկիզբը փշրուած)

26. — «կը կատարեանե՞նք տուն մը ցմրչուս կը կնքե՞նք (վաւերաթղթեր ցմրչուս).
27. — եղբայրները կը բաժնե՞ն (իրենց ժառանգութիւնը) ցմրչուս.
28. — ատելութիւնը կը մնա՞յ ցմրչուս [երկրին] մէջ.
29. — գեսը կը բարձրանա՞յ (և) կը յառաջա[ցնէ՞] հեղեղը ցմրչուս.

digitised by A.R.A.R.@

30. — չերեփագին [կը ձգէ՞] (իր) փոճակը,
31. — որպէսզի իր դէմքը տեսնէ արեան գէմքը (ցմիչա).
32. — հին օրերէն ի վեր [տեսակռնութիւն] չկայ.
33. — քնացողը(?) և մեռեալը որքա՞ն նման [են] իրարու.
34. — անոնք չե՞ն գիտեր պատկերը մահուան.
35 — պարզ քարտաշին և ագնուականը, երբ կը մօտենան [իրենց ճակատագրին].
36. — Անուշակիները՝ մեծ ատաուածները կը հաւա[քուին].
37. — Մամէիսուամբ՝ ճակատագրի արարչուհին, կը [զձ]ուէ անոնց հետ ճակատագրիդ.
38 — կեանքը և մահ կ'որոշեն.
39. — անոնք չեն յայտներ մահուան օրերը,
40 — Գիլգամէշ ըսաւ անոր՝ հեռաւորն Ուտնապիշտիմին.

(Միջատակարան)

41. — Տասերորդ տախտակ, օձն որ տեսաւ ամէն ինչի՝ Գիլգամէշի չարքին.
42. — Ատրբանիպալի պալատը, աշխարհի թագաւորը, արքան Ասորեստանի.

ՏԱԽՏԱԿ ՏԱՍՆԸՄԷՆՐՈՐԴ

1. — Գիլգամէշ ըսաւ անոր՝ հեռաւորն Ուտնապիշտիմին.
2. — «Քեզ կը գիտեմ, Ուտնապիշտիմ
3. — քու երեսոյթը տարբեր չէ, դուն նման ես ինծի.
4. — երբեք տարբեր չես, ինծի հանգոյն ես.
5. — իմ սիրտը նկատած էր քեզ իբրև անթերի մէկը մարտի մէջ.
6. — [թայց, ծուլորէն] կոնակիդ վրայ երկարած ես.
7. — [ըսէ ինծի], ի՞նչպէս մտար աստուածներու հաւաքոյթին մէջ, կեանքի քու փնտռտուքին մէջ».
8. — Ուտնապիշտիմ ըսաւ անոր՝ Գիլգամէշին.
9. — «Գիլգամէշ, պիտի յայտնեմ քեզի թաքուն քան մը,
10. — և աստուածներու մէկ գաղտնիքը պիտի ըսեմ քեզի.
11. — Շուրիպպակ՝ քաղաք մը կար դուն գիտես,
12. — [և որ] գետեզուած է Եփրատի գետ[ափին].
13. — այդ քաղաքը հին էր, և աստուածները անոր մէջն էին.
14. — իրենց սիրտը մղեց մեծ աստուածները ջրհեղեղ մը յառաջ բերելու.
15. — [հոն էին] Անուն՝ իրենց հայրը.
16. — արիսատիրա Էնլիլը՝ իրենց խորհրդականը.
17 Նինուրտան՝ իրենց ներկայացուցիչը,
18 — Ինենուկին՝ իրենց տոգիչը.
19. — Նինինիգու–Էան նաև ներկայ էր անոնց հետ.
20. — իրենց խօսքերը կրկնեցին եղեգնեայ հիպի մը
21. — «Եղէգնեայ հիպ, եղէգնեայ հիպ!, որմ! որմ!.
22 — Եղէգնեայ հիպ, լսէ! որմ, խորհէ!.
23 — Շուրիպպակի մարդ, Ուպարա–աուտուի որդի,
24. — քանդէ (քու) տունը, նաւ մը շինէ!
25 — լքէ ինչ քիրը, որոնէ կեանքը.
26. — արհամարհէ ստացուածքը և փրկէ կեանքը.
27. — հանէ նաւուն մէջ սերմը բոլոր կենդանի արարածներու.
28. — նաւը զոր պիտի շինես,
29. — իր ծաւալը պէտք է չափուի.
30. — անոր լայնութիւնը և երկարութիւնը պէտք է հաւասար ըլլան.
31 — ծածկէ զայն ստորերկրեայ ջուրերու [հանգոյն].
32. — հակիրճ և լսի իմ տիրոջ՝ Էայինն,
33. — [նայէ] տէր իմ, ինչ որ այսպէս հրամայեցիր,
34. — պատուած պիտի ըլ[լամ զայն] կատարելու.
35. — [թայց ի՞նչ] պիտի պատասխանեմ քաղաքին, ժողովուրդին և երէցներուն».
36. — Էան բացաւ իր բերանը և ըսաւ,
37. — խօսելով ինծի՝ իր ստաուտարին.
38. — «Այսպէս պիտի ըսես իրենց՝
39. — [ի]մացայ որ Էնլիլ կիս կ'ատէ,
40. — (այնպէս որ) պիտի չբնակիմ ձե[ր քա]ղաքին մէջ.
41 — ոչ ալ դարձնեմ իմ դէմքը Էնլիլի երկրին.

digitised by A.R.A.R.@

42. — [պիտի իջ]նեմ Ուրուքի մէջ և բնակիմ Էանին հետ՝ իմ [տի]բոջ.
43. — ձեր [վրայ] (բայց) պիտի տեղացնէ առատօրէն.
44 — [... թո]ղոնները(?) ... ձուկեր,
45. — [...] հունձքի հարստութիւն,
46. — ... կանաչ կեղևները ...
47. — ցորենի անձրև մը տեղալ պիտի տայ ձեր վրայ։
48. — Անմիջապէս որ [առա]ւտեան [առաջին փայլիլը] ճառագայթեց.
49. — երկիրը հաւաքուած էր [իմ չուրջ].
50–53. — (չափազանց հատուածական՝ թարգմանութեան համար).
54. — պղտիկը ձիւթ [բեր]աւ,
55. — գօրաւորը բերաւ [ուրիշ ինչ որ] պէտք էր.
56. հինգերորդ օրը տա[ւ] իր ձեռը.
57. — մէկ լծմար էր իր յատակի տարածքը, 120 կանգուն՝ իւրաքանչիւր պատին բարձրութիւնը.
58. — 120 կանգուն էր իր կամրջակին իւրաքանչիւր կողմը.
59. - չորեցի իր շրջակիրը (և) ձեռեցի զայն.
60. — վեց կամրջակներ շինեցի անոր մէջ,
61. — (այսպէս) բաժնելով (զայն) եօթը (մասերու).
62. — իր յատակագիծը բաժնեցի ինը (մասերու).
63. — ջրախափաններ քաշեցի անոր մէջ
64. — հարթածոյներ հայթայթեցի և պաշար մթերեցի.
65. — վեց սար ձիւթ թափեցի հնոցին մէջ,
66. — (և) երեք սար կշռոյ [թափեցի] անոր մէջ.
67. — երեք սար իւղ կողովակիրները բերած էին,
68. — բացի մէկ սար իւղէ զոր կպրու

101. — Խաւկալը կոյժերը դուրս կը քաշէ,
102. — Նիհարտան կու գայ և խրամները բանալ կու տայ։
103. — Անուանկիները բարձրացուցին ջահերը,
104. — լուսաւորելով երկիրը իրենց պայծառութեամբ։
105 — Աղաղին անը հասաւ երկինք,
106. — խաւարեցաւ ինչ որ լուսաւոր էր։
107. — .. երկիրը փշրեց(?) ... պէս։
108. — մէկ օր փոթո[րիկը փչեց]։
109. — արագ փչեց և [.].
110. — մարդի նման [եկ]աւ ժո[ղովուրդին] վրայ։
111. — ոչ ոք կրնար տեսնել իր ընկերը։
112. — ժողովուրդը չէր կարելի ճանչնալ երկինքէն։
113. — աստուածները սարսափահար էին ջրհեղեղէն։
114. — անոնք փախան, բարձրացան Անու-ի երկինքը։
115. — աստուածները կծկեցան, կծկանցան արտաքին պատին դէմ։
116. — Իշտար պոռաց երկնող կնոջ մը պէս,
117. — ա[ստուածներու] քաղցրաբարբառ տիրուհին ողբաց
118. — «Աւա՛ղ, հին ժամանակները հողի վերածուած են,
119. — որովհետև չարիք հրամայեցի աստուածներու ժողովին մէջ։
120 — Ի՞նչպէս կրցայ հրամայել չարիք մը աստուածներու ժողովին մէջ։
121. — պատերազմ հրամայելով՝ իմ ժողովուրդը քանդելու համար։
122. — Երբ ես եմ որ ծնայ իմ ժողովուրդը։
123. — Ձուկի հաւկիթներուն պէս անոնք կը լեցնեն ծովը»։
124. — Անունակի աստուածները լացին անոր հետ։
125. — աստուածները նստած էին, ընկճըւած, արտասուելով,
126. — իրենց շրթունքները կծկուած էին։
127. — Վեց տիւ և (վեց) գիշեր։
128. — Ջրհեղեղի հողմը փչեց, մրրիկը ճզմեց երկիրը։
129. — Երբ եօթներորդ օրը հասաւ, փոթորիկը, ջրհեղեղը,
130. — որոնք բանակի մը պէս կռուած էին, հանդարտեցաւ յարձակումին մէջ։
131. — ծովը խաղաղեցաւ, մրրիկը սպառեցաւ, ջրհեղեղը դադրեցաւ։
132. — Նայեցայ օդին, լռութիւն կը տիրէր,
133. — և ամէն մարդկութիւնը հողի վերածուած էր։
134 — ... հարթ էր տափարակ տանիքի մը պէս։
135. — Իջանելիք մը բացի, և լոյսը ինկաւ իմ դէմքին վրայ,
136. — ծնկեցայ, նստեցայ և արտասուեցի,
137. — արցունքները կը վազէին իմ դէմքին վրայ։
138. — դէպի ափերը նայեցայ, ծովու տարածքին վրայ,
139. — տասներկու (երկվեցեակ ժամ հեռաւորութեան) վրայ, կ՚երեւէր ցամաքի տարածք մը։
140. — Նաւը ցամաքահանեց Նիցիր(91) լերան վրայ։
141. — Նիցիր լեռը բռնեց նաւը հաստատ կերպով և չձգեց շարժելու։
142. — մէկ օր, երկու օր, Նիցիր լեռը բռնեց նաւը հաստատ կերպով և չձգեց շարժելու։
143. — երրորդ օրը, չորրորդ օրը Նիցիր լեռը բռնեց նաւը հաստատ կերպով, և չձգեց շարժելու։
144 - հինգերորդ օրը, վեցերորդ օրը Նիցիր լեռը հաստատ կերպով բռնեց նաւը, և չձգեց շարժելու։
145. — Երբ եօթներորդ օրը հասաւ,
146. աղաւնի մը դրկեցի և արձակեցի։
147. — աղաւնին գնաց և վերադարձաւ,
148 — հանգչելու տեղ չէր երեւեր, այնպէս որ վերադարձաւ։
149. — յետոյ ծիծեռնակ մը դրկեցի և արձակեցի։
150. — ծիծեռնակը գնաց և վերադարձաւ,
151. — հանգչելու տեղ չէր երեւեր և վերադարձաւ։
152. — յետոյ ագռաւ մը դրկեցի և արձակեցի։
153. — ագռաւը գնաց, և երբ տեսաւ թէ ջուրերը իջած են,
154. — կերաւ, թռչտեց, կանչեց (և) չվերադարձաւ։
155. — յետոյ (ամէն ինչ) յանձնեցի չորս հովերուն, և զոհ մատուցի։

ԱՆՈՒՇԱՒԱՆ ՎՐԴ. ԶՂՋԱՆԵԱՆ

(Շարունակելի՝ 15)

(91) Արդի Բիր Օմար Կուտրունն է։ Տես վերոյիշեալ աղբիւրը, էջ 94։